

ցունց եւ մի ոմն յաշխարհականաց ընկերացեալ իւրն եւ եղեալ ի կերպարանս գոհհիլ աշխարհականաց. եւ զնացեալ ի գիւղ մի, տաւարարծութիւն առնելով գեղջն»։ Մարտիրոս վարդապետ վարապայ առաջնորդն լսելով տարօրինակ խաշնարածներուս մասին, կը հրաւիրէ զանոնք վանք։ «Լուր եղեւ Պետրոսին (Կարկառեցւոյ). եւ նա ելեալ եկն ի համբաւ նորա եւ եգիտ որպէս լուաւ. եւ երդմամբ մեծաւ առեալ տարաւ ընդ իւր, թէ զքեզ ի կամս քո թողից։ Եւ մէկ ժամանակ այլ փոք(ր) կացեր մօտն եւ յետոյ խնդրեր էր հրաման տալ իւրն՝ զնալ յերուսաղէմ բնակել»։

Հոս, Երուսաղէմ, կը հանդիպի իրեն Դարանաղցի 1606ին. անոր նկարագիրը այսպէս կու տայ (102). «Տէր Կիրակոսն Տրապիզոնցի ամենիմաստ ընթերցող ներկուռն եւ եօթնապատիկ առաւել խստակրօն եւ չորակեր եւ անինչք եւ ամենայն առաքինութեամբ զարդարեալն, տեսականաւն եւ գործնականաւն»։

Տէր Կիրակոսի յետագայ շրջանի գործունէութեան մասին խօսած ենք արդէն։

Գրիգոր Դարանաղցի բարեկամ մը էր «Քաղկեդոնիկներուն»։ Եւ սակայն եթէ այս դրուատական տողերը կը նուիրէ Տ. Կիրակոսի յիշատակին եւ նոյն իսկ անձամբ մտադիր էր հետեւելու անոր քայլերուն, ապացոյց կ'ընծայէ թէ իր յարաբերութիւնը Տ. Կիրակոսի հետ բարեկամական էր, նաեւ հոգեւոր զօղիւ միացած։